Աշխատանքի նկարագրություն

Պաշտոնի անվանումը՝ Մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) մասնագետ

Անմիջական ղեկավար՝ Ծրագրի ղեկավար

Երկրորդ ղեկավար՝ Քաղաքապետի խորհրդական

Աշխատանքի շրջանակները: ՄԳ մասնագետը պատասխանատու է Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ 1-ի (ՔԿԶՆԾ S1-ի) ծրագրի կատարողականի մոնիթորինգի համացանցային համակարգի (ԾԿՄՀ) ստեղծման և պահպանման համար: Վերջինս նաև զարգացնում և հետևում է ծրագրի համար որակի ապահովման պլանին, պահպանում է գրանցումները, գնահատում և զեկուցում է ՔԿԶՆԾ S1-ի իրականացման առաջընթացի վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում, աջակցում է հետագա տրանշների համար Պարբերական ֆինանսական հայտերի (ՊՖՀ) պատրաստմանը: Ծրագրի ղեկավարի համար պատրաստում է հաշվետվություններ ամենամսյա կամ եռամսյակային կտրվածքով: Գործում է որպես կապող օղակ Ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուի (ԾԿԻԱԽ) ՄԳ խմբի, Երևանի քաղաքապետարանի (ԵՔ), Գործադիր գործակալության (ԳԳ), ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) միջև, ինչպես նաև անմիջական հարաբերություններ է հաստատում և պահպանում պետական մարմինների հետ:

ՄԳ մասնագետի պարտականությունները

1. **ՔԿԶՆԾ S1-ի ամբողջ կատարողականի մոնիթորինգ՝ հետագա տրանշների համար ՊՖՀ-ների պատրաստման հետ կապված**

- Հետևել ծրագրի կատարողականին՝ ԱԶԲ-ի ԾԿՄՀ ձեռնարկի համաձայն,
- Աջակցել ԾԿԻԱԽ-ին ստեղծելու և պահպանելու համացանցային ԾԿՄՀ և ռազմավարություն՝ ներառելով տվյալների հավաքագրումը, տվյալների վերլուծությունը և հաշվետվական համակարգերը,
- Աջակցել ՊՖՀ-ների պատրաստմանը՝ մասնավորապես նախագծի մոնիթորինգի շրջանակները՝ հետագա տրանշների համար, ըստ անհրաժեշտության,
- Իրականացնել Ծրագրի ղեկավարի կողմից հանձնարարված և/կամ Վարկային ու Ծրագրի համաձայնագրերով և ծրագրի այլ փաստաթղթերով սահմանված այլ համապատասխան առաջադրանքներ ու պարտականություններ:

2. **Հատուկ գործողություններ**

- Համակարգել կատարողականի բոլոր թիրախների համար բազային տվյալների հավաքագրման գործընթացը՝ ներառյալ ԾԿԻԱԽ-ի կողմից ուսումնասիրությունների նախագծումը: Ապահովել բազային տվյալների հաշվետվության վաղաժամ վերանայումը՝ որակյալ արդյունք ապահովելու նպատակով: Ապահովել, որ վիճակագրական և ստացված տվյալները բաժանվեն ըստ սեռի,
- Համագործակցել Ծրագրի իրականացման մասնագետների խմբի (ԾԻՄԽ) կազմի, ԵՔ-ի և ԱԶԲ-ի հետ ԾԿՄՀ-ի համացանցում տեղադրելու հարցերի շուրջ,
- Ապահովել ԾԿՄՀ-ի փոփոխումն ու թարմացումը բարելավված տեղեկատվությունների (ցուցանիշների, բազային տվյալների և թիրախների թարմացում տեխնիկական ուսումնասիրությունների կամ աղքատության և սոցիալ-տնտեսական ցուցիչների վերաբերյալ ավելի թարմ վիճակագրական տեղեկություններ ստանալուն պես) հասանելի դառնալուն պես,
- ԾԿԻԱԽ-ի հետ համակարգել ծրագրի համար որակի ապահովման պլանի կազմումն ու մոնիթորինգը,
- ԾԿԻԱԽ-ի աջակցությամբ ստեղծել ծրագրի համացանցային կայք՝ ծրագրի իրականացման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունների տարածման նպատակով՝ գլխավոր ցուցանիշների հետ միասին,
- Ամենամսյա կտրվածքով վերանայել Նախագծման և մոնիթորինգի Շրջանակներով (ՆՄՇ) սահմանված կատարողականի թիրախները ծրագրի իրականացման ընթացքում, մասնավորապես ծրագրի միջին և ավարտական փուլերում,
- Եռամսյակը մեկ իրականացնել տվյալների հավաքագրում և մոնիթորինգի ենթարկել աղքատության և սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները՝ չափելու շահառուների վրա գործած ազդեցությունները տնտեսությունների ընտրության ուսումնասիրությունների և մասնակցային հետազոտության մեթոդների միջոցով,
- Նպաստել ԾԿԻԱԽ-ի՝ սոցիալական ուսումնասիրությունների մեթոդների վերապատրաստման դասընթացներին և ԵՔ-ի կարողությունների զարգացմանը՝ ազդեցությունների գնահատման իրականացման հարցերում,

- ՄԳ-ի վերաբերյալ ԾԿԻԱԽ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի որակի և քանակի հաստատում,
- Զբաղվել պայմանագրային փոփոխություններով, հայցերով կամ պահանջներով՝ ԾԿԻԱԽ-ի մոնիթորինգի և գնահատման գործողությունների վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, և համագործակցել ԾԻՄԽ-ի մյուս աշխատակիցների հետ,
- Նպաստել տեղեկատվության տարածմանը Կառավարության, հանրության և դոնոր համայնքների շրջանակներում,
- Մասնակցել ծրագրի բաղադրիչների մոնիթորինգին դաշտային այցելությունների և հաշվետվությունների վերանայման միջոցով,
- Պատրաստել և Ծրագրի ղեկավարին, ԵՔ/ԳԳ և ԱԶԲ ներկայացնել լրամշակված պարբերական հաշվետվություններ ընթացիկ մոնիթորինգի և գնահատման գործողությունների վերաբերյալ:

Գիտելիքներ և որակավորում

- Կրթական աստիճան տնտեսագիտության, իրավաբանության, սոցիոլոգիայի կամ նմանատիպ բնագավառում,
- Առնվազն 5 տարվա փորձ մոնիթորինգի և գնահատման բնագավառում հանրային կամ մասնավոր սեկտորում,
- Համակարգչային տեղեկատվական համակարգերի իմացություն,
- Հայերեն և անգլերեն լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ,
- Իրազեկվածություն միջազգային կազմակերպությունների նպատակներից և ընթացակարգերից, նախագծման մոնիթորինգի շրջանակներից, մասնավորապես (Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ (EBRD), Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC), KFW գերմանական բանկ, Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ և այլ դոնոր կազմակերպություններ),
- Համակարգչային գրագիտություն (առնվազն՝ Word, Excel, PowerPoint):

Մասնագիտական ունակություններ

- Արդյունքների ստացման նպատակասլացություն,
- Գերազանց վերլուծական հմտություններ,
- Գերազանց մատուցման և կազմակերպչական հմտություններ,
- Ցուցադրված դիվանագիտական և բանակցային հմտություններ
- Խնդիրների լուծման և որոշումներ կայացնելու խորը զարգացած հմտություններ,
- Կառավարման հմտություններ.
- Պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- Համագործակցում/թիմային աշխատանք,
- Գրավոր հաշվետվությունների կազմման հմտություններ:

Աշխատանքի պայմաններն ու դրույթները

Աշխատանքային պայմաններն ու դրույթները կարգավորվում են ՀՀ Օրենսդրությամբ, Երևանի քաղաքապետարանի քաղաքականությամբ և ընթացակարգերով ու աշխատանքային պայմանագրով: Աշխատանքի նկարագրությունը հանդիսանում է աշխատանքային պայմանագրի անբաժանելի մասը:

JOB DESCRIPTION

Position title: Monitoring and Evaluation (M&E) Specialist
Immediate Supervisor: Project Director
Second Level Supervisor: Mayor Advisor

Scope of the job: The M&E specialist will be responsible for establishing and maintaining a web based project performance monitoring system (PPMS) for the SUDIP T1. He/she will also develop and monitor quality assurance plan for the project, maintain records, evaluate and report the implementation progress of the SUDIP T1 project. He/She will assist in preparation of Periodic Financial Requests (PFR) for subsequent tranches, if needed. He/she prepares reports to the Project Director on a monthly and quarterly basis. He/she serves as liaison between the M&E team of PMIC, the Municipality, the EA, the National State Statistics Service and ADB and develops and maintains direct relationships with government authorities.

Responsibilities of the M&E Specialist:

1. **Overall performance monitoring of the SUDIP T1 project in preparation of Periodic Financial Requests (PFR) for subsequent tranches:**

- Monitor project performance in accordance with the ADB's Project Performance and Monitoring System Handbook.
- Support the PMIC to develop and maintain web based PPMS and strategy, including data-collection, data-analysis and reporting systems;
- Assists in preparation of Periodic Financial Requests (PFR), in particular the design monitoring frameworks, for subsequent tranches, if needed.
- Carry out other related tasks and responsibilities as requested by the Project Director and/or prescribed in the Loan and Project Agreements and other project documents.

2. **Specific Activities**

- Coordinate baseline data collection for all performance targets, including the design of surveys by the PMIC. Provide early review of the baseline report to ensure quality output. Ensure that statistics and findings are disaggregated by gender;
- Coordinate the installation of the web-based PPMS with the PMU staff and the Municipality and ADB;
- Ensure that the PPMS is modified and updated as improved information becomes available (updating indicators, baselines, and targets upon the receipt of information from technical studies or better statistical information on poverty and socio-economic indicators);
- Coordinate with the PMIC the development and monitoring of quality assurance plan for the project,
- With the assistance of the PMIC, develop a project website to disclose information on the status of the project implementation with key indicators

- Review performance targets set in the Design and Monitoring Framework (DMF) as the project progresses on a monthly basis through implementation particularly at the project mid-term and completion stages;
- Collect data quarterly and monitor key poverty and socioeconomic indicators to measure impacts on beneficiaries through selective household surveys and participatory research methods;
- Facilitate PMIC's trainings in social research methods and building the YM capacity on performing impact assessments;
- Verify the quality and quantity of PMIC deliverables related to M&E;
- Deal with contract variations, claims or requests related to the monitoring and evaluation activity of the PMIC, if needed and coordinate with other PMU staff;
- Facilitate information dissemination with the Government, public and the donor community;
- Participate in the monitoring of the project components through site visits and review of reports;
- Prepare and submit periodic consolidated reports of ongoing monitoring and evaluation activities to the Project Director, Municipality/EA and ADB.

Knowledge and qualifications:

- Degree in economics, law, sociology or related field;
- At least 5 years experience in the area of monitoring and evaluation in public or private sectors;
- Knowledge of computerized information systems
- Excellent Armenian and English written and oral communication skills;
- Familiarity with the goals and procedures, design monitoring frameworks of international organizations, in particular (World Bank, EBRD, IFC, KFW, Millennium Development Corporation or other donors);
- Computer literacy (At least Word, Excel, PowerPoint);

Professional Competencies:

- Results-oriented;
- Excellent analytical skills;
- Excellent presentation and facilitation skills;
- Demonstrated diplomatic and negotiating skills;
- Strongly developed problem-solving and decision making skills;
- Managerial skills;
- Planning and Organization skills;
- Cooperation/Teamwork;
- Report writing skills.

Terms and Conditions of Service:

Terms and conditions of employment are governed by Armenian Legislation, Yerevan Municipality policies and procedures and employment contract. Job description is an integral part of the employment contract.

PMIC: Project management and Institutional Strengthening Consultant, DESC: Detailed Engineering and Construction Supervision Consultant, GSB: Government Supervisory Board, EA, Executing Agency, IA: Implementing Agency, PIU: project implementation unit, EIA: Environmental Impact Assessment, IEE: Initial Environment examination, EMP: Environmental Management Plan, LARF: Land Acquisition and resettlement Framework, LARF: Land Acquisition and resettlement Plan. PPMS: project performance monitoring system